ԱՐՇԱԼՈՒՅՍ

ԱՐՁԱԳԱՆՔՔ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱԹԹԵՐՔ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ



ՀԱՍՈՒՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ
ՀԴՈՎՍ

ԵՍ ԵՄ ՃՇՄԱՐԻՏ ՏՈՒՐԻՍ ԵՒ ԿԵԱՆՔ

ԱԶԴ

1. Կարողիկէ Սրմագաւիզը ան այժմ կը հրատարակուի ի Հռոմ: Առաջին վիճակեայի բաժանորդագիրն է մէկ մէնիս անոնց հայեար որ ի Կ. Պոլիս՝ Կարողիկոսարանի մէջ, իսկ ի գաւառս՝ Եպիսկոպոսարաններու կամ Առաջնորդարաններու մէջ կ'ուզեն բաժանորդագրուիլ: Ուղղակի Հռոմ դրկելու համար՝ Չորս (4) ֆրանք է: Հասցեն է. Collegio Armeno, 31 S. Nicola da Tolentino. Roma — Երբ ի մօտոյ Կ. Պոլիս փոխադրուի, ծաւալն ու ձեւը, ինչպէս նաեւ բաժանորդագրութեան պայմանք վերջնականապէս պիտի ճշդուին: —
Մէկ թիւը՝ մէկ դահեկան է:

2. Սրմագաւիզը կը հրատարակուի Շաբաթ օրերը:

3. Խմբագրութիւնս պարտաւորեալ չի անսպասնաւ կամ նոյնութեամբ հրատարակելու իրեն դրկուած ո՛ւ եւ է յօդուած:

4. Ստորագրեալ յօդուածոց պատասխանատուութիւնը ամբողջովին կը մնայ գրողներուն վրայ:

5. Նամակ եւ յօդուածներ կը դրկուին ուղղակի խմբագրութեան:

6. Ձեռագիրներ ետ չեն դարձուիր:

7. Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուի:

ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ԹԱՓԱՓԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

Առաջին Տարի | 22 Յուլիս 1911 | Թիւ 5.

ՀԱՄԱԺՈՂՈՎ ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ Ի ՄԱՏՐԻՏ

(Շարունակութիւն)

Յունիս 23, առաւօտուն, Ամենապ. Հոգեւոր Տէրն իւր Քարտուղար Ճամճեան Յ. Վ. ին հետ առաջնորդուեցան ի մեծ Թանգարան (Musé de Prado), որ կրնայ ըսուիլ թէ երկրորդ Հռովմ մի է, լի սքանչելի Գլուխ-գործոց նկարներով, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ գերահռչակն Մուրիլլոյի « Անարատ Յղութիւն » ը։

Կէսօրէն վերջը պիտի հանդիպէր ի Մատրիտ Քահանայապետական Պատուիրակն Վսեմ. Միրանաւորն Կարսիա տէ Ակուիրրէ, Պատրիարք Արևմտեան Հնդկաց, Նախագահ Սպանիոյ և Արքեպ. Թոլեդոյի։ Կանուխէն սկսան բոլոր փողոցները բազմութեամբ լեցուիլ. շարժում, երթևեկութիւն անհամար ժողովրդեան և բազմաթիւ քահանայից. ընդհանուր

տօնախմբութիւն ամենուրեք. փողոցները, հրապարակները և տունները մասամբ զարդարուած են դրօշներով, կամարներով, արմաւենիներով, աշխատութիւններն ու պատրաստութիւնները կը շարունակուին փութոյ պնդութեամբ։

Երկու պատուիրակութիւններ՝ մին եկեղեցականաց, միւսն՝ աշխարհականաց, գնացին դիմաւորելու զԿարդինալ Պատուիրակը ի կայարան. իսկ Եպիսկոպոսունք, Կանոնիկոսներ և զանազան սպանիացի ու օտարազգի պատուիրակութիւններն կը հաւաքուէին ի Ս. ԽԱՉ եկեղեցին։ Ամենապ. Կաթողիկոսն իւր Քարտուղարով գնացին հոն ի ժամ Յուկէս. խուռն բազմութեամբ լեցուած էին եկեղեցին և ամէն փողոցներն ուսկից պիտի անցնէր Կարդինալը։ Ժամը 4ին բոլոր Եպիսկոպոսներն՝ թուով դրեթէ 50, յառաջացան դէպ ի մեծ դուռը և թափօրն կազմուեցաւ։ Եւ ահա հասաւ Կարդինալը քառաձի պալատական կառքի մը մէջ բազմած. ամբողջ հրապարակին վրայ շարուեցան ձիաւոր արքայական թիկնապահներ, որք կայարանէն իսկ ընկերացեր էին Կարդինալին կառքին։ Մատրիտի Եպիսկոպոսն Եկեղեցւոյ դռնէն ընդունեցաւ Քահանայպ. Պատուիրակը, և շարժեցաւ թափօրն դէպ ի աւագ խորան՝ հետևեալ կարգաւ. ընդ առաջ կ'երթային սպանիացի կրօնաւոր և աշխարհական կղերն. ապա օտարազգի. յետոյ կուգային Մատրիտի Ժողովրդապետք, Կանոնիկոսք. ասոնց կը հետևէին Եպիսկոպոսներ ու Արքեպիսկոպոսներ. հուսկ յետոյ կուգար Միրանաւորն՝ ոչակողմն ունենալով Քահանայապետական Դեսպան՝ Գեր. Ա. Վիգոյ, և ձախակողմը Ամենապ. Կաթողիկոս Պատրիարք՝ Պող. Պետրոս ԺԳ. Թէրզեանը։ Թափորի ժամանակ վեհաշուք երգեհոնի ընկերակցութեամբ կ'երգուէր. « Քահանայ և Քահանայապետ ». « Ահա Քահանայ մեծ », զոր յօրինած էր սպանիացի Մաէսթրոյ Մալիդօր։ Կարդինալը՝ կարճ աղօթքէ մը վերջը, Քահանայապետական Օրհնութիւնը տուաւ. և վերակազմուեցաւ թափօրը, մի և նոյն կարգաւ, Մայր Եկեղեցի երթալու համար։ Մեծ Ոտանին ամբողջ եկեղեցեաց զանգակները կը հնչէին ոգևորութեամբ, և ահագին բազմութիւն մը՝ ցնծալից աղաղակներով կը թնդացնէր օդը. « Կեցցէ՛ Սրբազան Պապն, կեցցէ՛ Կաթողիկէ Սպանիա, կեցցէ՛ ամենասուրբ Խորհուրդ Հաղորդութեան »։ Կարգապահութեան կը հսկէին զինուորներ և հեծելազօրը։ Կարդինալին վրայ ամպհովանի մը բռնած կը տանէին Մատրիտի Ակնուականութիւնէն վեց բարձրաստիճան անձնաւորութիւններ։ Ս. Խաչ եկեղեցիէն մինչև Մայր Եկեղեցի հինգ վայրկենի ճամբայ մըն է. հազիւ մէկուկէս ժամէն կատարուեցաւ։ Մայր Եկեղեցւոյ հրապարակին

վրայ բիւրաւոր բերաններէ ցնծալից « Կեցցէ » ի գոչումները փոթորկեցան ահաւոր թնդիւններով. շքե՛ղ էր տեսիլը։ Եկեղեցին ամբողջ էլեկտրական լոյսերու մէջ ողողուած և աքանչելապէս զարդարուած էր։ Եպիսկոպոսներն շարուեցան վերի դասն, միւս եկեղեցականք վարի դասը. իսկ դասէն դուրս ներկայ էին տէրութեան բարձրաստիճան պաշտօնեայք. և մեծամեծ զինուորական պաշտօնականներ շարուած կը կենային իրենց համազգեստներով ու նշաններով։ Կարդինալն երբ եկաւ իր բարձր գահուն վրայ, ազնուական աշխարհականներէն մին կարդաց Սրբազան Քահանայապետին կոնդակն որով կարդ. Ակուիրրե կը կարգուէր Պատուիրակ և Ներկայացուցիչ Քահանայապետին։ Ամբողջ ժողովուրդը ծափահարեց այս ընթերցումը, և կեցցէ՛ներ կրկին որոտացին կամարներու մէջ ահեղ արձագանգով։ Ապա փոխանակուեցան ճառեր՝ Մատրիտի Եպիսկոպոսին և Պատուիրակին միջև, սպաներէն լեզուաւ. երգերու յաջորդեցին աղօթքներ. ապա Կարդինալը տուաւ Քահանայապետական Օրհնութիւնը։ Եպիսկոպոսաց դուրս եկած պահուն ոգևորեալ ժողովուրդը կ'երգէր Համաժողովին նուիրեալ սպաներէն երգն, շատ սիրուն, շատ ազդու. որոյ առաջին մասն է հետևեալ կտորը.

Երգենք Սիրոյն սէրերու,
Երգենք Տիրոջ.
Աստուած հոս է. եկէ՛ք երկրպագենք,
Երկրպագենք Քրիստոսի Փրկչին.

և ժողովուրդը կը պատասխանէր.

Փա՛ռք Քրիստոսի Յիսուսի.
Երկինք և երկիր
Օրհնեցէ՛ք զՏէր.
Պատիւ և փառք քեզ
Թագաւոր փառաց.
Սէր ընդ միշտ քեզ
Ո՛վ Աստուած Սիրոյ. (1)

---

(1) Cantemos al amor de los amores,
Cantemos al Senor.
Dios està qui! Venid adoradores
Adoremos à Cristo Redentor.

Gloria à Cristo Iesus!
Cielos y tierra
Benedicid al Senor.
Honor y Gloria a Ti,
Rey de la Gloria;
Amor por siempre à Ti
Dios del amor! etc.

24 Յունիս Շաբաթ, հանդիսութիւն մը կատարուեցաւ նոր շինուելիք Մայր Եկեղեցւոյ ստորերկրեայ մասին (Crypte) մէջ, որ արդէն մեծ եկեղեցի մը կը ներկայացնէ, ամբողջ էլեկտրական լոյսերու մէջ ողողուած։ Մայր եկեղեցւոյ շինութեան համար ցարդ ծախսուած է ութ միլիոն թէզիրաս (շուրջ 8 միլիոն ֆր.). և տակաւին պէտք է 15 միլիոն. սնը գոթական է։ Ճակատը բարձր աշտարակով մը, ինչպէս Գոլոնիոյ հռչակաւոր Մայր եկեղեցին։ Այս եկեղեցին փոքրաձև շինուած է և Եպիսկոպոսարանի մէջ ցուցադրուած. ամբողջութիւնն հիանալի է։

Յետ միջօրէի ի ժամ 5 Կարդինալ Պատուիրակն մեծ ընդունելութիւն մը կատարեց ներկայ Եպիսկոպոսաց՝ Թագաւորին պալատան մէջ ուր իջեւանած է։ Որոշեալ ժամուն Նորին Գերերջանկութիւնն ալ իւր քարտուղարին հետ գնացին՝ բարի գալուստ մաղթելու։ Թագաւորական պալատն լայնանիստ շէնք մըն է՝ քառանկիւն, միջավայրը բաց՝ մեծ հրապարակի մը նման։ Գլխաւոր մուտքն փառաւոր է, առջևը կը տարածուի ընդարձակածաւալ հրապարակ մը՝ և գեղեցիկ ու զարդարուն երկաթեայ վանդակապատով շրջապատուած, որ քիչ մը կը յիշեցնէ Վէրսայլի պալատան հրապարակը։ Շէնքը դուրսէն պարզ ոճով բայց վեհ է. մէջը շքեղ և հարուստ. նշանակելի է պատերուն հաստութիւնը՝ որ ամէն այցելուոց մտադրութիւնը կը գրաւէ. երեք մէթրոյէն աւելի ստուար։ Կարդինալը կը գտնուէր զարդարուն սրահի մը մէջ, գահու մը առջև, ալ կողմն ունենալով Քահանայապետին Դեսպանն ու ձախ կողմը Մատրիտի Եպիսկոպոսը, որ կը ներկայացնէր բոլոր Եպիսկոպոսները, որ Կարդինալին առջևէն կ'անցնէին և միւս դուռնէն կ'ելլէին։ Հոգևոր Տէրն հագուած էր կարմիր մեծ փիլոնը... « Patriarca de los Armenos y el su familiar - Հայոց Պատրիարքն և իւր քարտուղարը ». Կարդինալը սիրալիր խօսքեր ուղղեց. դուրսը խմբուած բազմութիւնը կը ծափահարէր։

Թագաւորը քաղքէն բացակայ է, առջի օր եկած էր Կարդինալն ընդունելու, անմիջապէս մեկնեցաւ։

(Շարունակելի)



ԱՊՕՐԻՆԻ ԵՒ ԱՆԱՐԺԱՆ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

(Շարունակութիւն)

Կեղծել, անտեսել աւելորդ է. ինքզինքը խաբել չըլլար. խմաստակութիւններով ո՛չ ապատամբութիւն կ'արդարանայ, ոչ մոլորութիւնը կ'ուղղուի։ Ցայտարարութիւնը և անոր յարակից բոլոր արարքներն վիհ մը կը բանան (կարելի չէ չտեսնել), բայց այդ վիհը անձի և անձերու մէջ չէ, այլ սկզբունքի և սկզբունքի մէջ, Եկեղեցւոյ և կուսակցութեան մը մէջ։ Այսօր Թէրզեանի անունը և անձը չէ որ կը հալածուի, կը նախատուի, կ'այպանուի, կ'անարգուի, այլ անոր անուան ու անձին ներքև կաթողիկէ սկզբունքն է որ կ'ոտնակոխուի, կաթողիկէ Եկեղեցին է որ կը վիրաւորուի, անոր Գերագոյն Գլուխն՝ Ս. Քահանայապետն է որ կ'անպատուի ու կը մերժուի, Քրիստոս ինքն է որ կը հալածուի և կրնայ այս հալածիչներուն ալ ըսել. « Սաւուղ Սաւո՛ւղ՝ զի՞ հալածես զիս »։ Զարմանցութի՞ւն է ըսածնիս. ո՛չ, տխուր իրողութիւն մը։ Ինչ՞ եղաւ որ պաշտելին, գերզգօն, աստուածարեալն Թէրզեան՝ եպերելի, տխմար, խենդեցած և անիրաւ հրատարակուեցաւ. սկզբունք մը քարոզեց, վարդապետութիւն մը հռչակեց և այդ սկզբունքի և վարդապետութեան գործադրութիւնը պահանջեց ոնոնցմէ, որոնք կաթողիկէ անուամբ ճիշդ այդ սկզբունքի և վարդապետութեան հետեւող կ'ըսուին. մէկ խօսքով կաթողիկեայներէ կաթողիկէութիւն ուզեց. ասկից աւելի բնական ու արդարացի պահանջ չէր կրնար ըլլալ։ Այսու հանդերձ այդ սկզբունքի և վարդապետութեան դէմ յայտարարութիւն մը կը նետուի, պահանջին դէմ մերժում մը կը խրոխտայ, որ կը գահավիժէ մինչև ամենածայրայեղ ըմբոստութիւն. ասկից աւելի հակասական ու անարդարանալի ընթացք չէր կրնար ըլլալ։

Հակասութիւնը շատ աչքառու է ձախորդ յայտարարութեան մէջ։ Վանզի մինչդեռ մէկ կողմանէ կը հրատարակուի հոն որ « դատը զուտ աշխարհական է և կրօնական գործերով ի սպառ չեն պարապիր », անդին կ'ուրացուի կաթողիկսի իրաւասութիւնը ըսելով « չեմ հասկնար ո՞ւսկից կ'առնի », իրաւասութիւն մը որ աշխարհական չըլլալէ զատ, է պարզապէս կրօնական։ — Ընդ հակառակն աշխարհական ժողովի մը կը յատկացուի « փարչային ԱՄԷՆ գործոց վրայ իրաւասութիւն » առանց բացառութեան, առանց զանազանութեան, անխտիր ամէն գործոց վրայ. — ժողո-

վրդական բարի վկայութիւնը որ թոյլատրուած է՝ իբր կանոնական ընտրութիւն կը հռչակուի. մինչդեռ ժողովրդական այդ ձայնը ոչ ընտրեալներու ալ վրայ ցրուած ըլլալով յայտնապէս ընտրողական չէ, այնպէս որ վկայական քուէից միահամուռ համաձայնութենէ վերջն ալ կրնար թէրզեան ընտրուած չըլլալ։ — Միւս կողմանէ այդ վկայութիւնը՝ լոկ առանձնաշնորհում մը ըլլալով, իրաւունք կը քարոզուի. որով յայտնապէս Եկեղեցւոյ սեմերէն շատ անդին անցնիլ կը փորձուի մինչև անոր բեմը, անոր Աթոռը նստեցնելու համար վեհափառ ժողովուրդը, ժողովրդեան օրէնսդիր կամքը. որ սկզբունքով Եկեղեցին ալ միւս քաղաքական հաստատութեանց կարգը կը դրուի. — եւ այս կ'ըլլայ կաթողիկեայ անունն պահելով, կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ. դժնդա՜կ հակասութիւն։

(Շարունակելի) Փող

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

Ամենապատիւ Պօղոս Պետրոս ԺԴ. Թէրզեանի հանապարհորդութիւնն ի Հռոմ

Ամեն. Կաթողիկոսը Ապրիլ 3 ին ընդունուեցաւ յունկնդրութիւն Ս. Քահանայապետէ. որ ամբողջ ժամ մը նուիրեց իրեն այն հայրապետ ու սրտագին վերաբերմամբ, որ եղական ըրած են միշտ զՊիոս Ժ։ Ունկնդրութիւնը վերջանալով Ն. Սրբութիւնը յօժարութեան շեշտով մը՝ « Ես քու տրամադրութեանդ պատրաստ եմ, ըսաւ, ուզած ժամանակդ եկո՛ր »։ Զէր կրնար աւելի յուզիչ ըլլալ ընդհանրական Եկեղեցւոյ Գերագոյն Հովուապետի զիջողութիւնը մեր Հոգեւոր Տիրոջ հանդէպ, որնոր կրկին ու կրկին շնորհակալութիւնը յայտնեց ու լիովին մխիթարուած մեկնեցաւ։ — Ս. Քահանայապետէ վերջ այցելեց զվսեմ. Կարդ. Մէրի Տէլ Վալ և քահանայապետական Պալատան Մաճճիորտոմօ Գերպ. Պիզլէդի. երկուքն ալ յարգանօք ու ազնիւ ցոյցերով ընդունեցան զինքն։

Աւագ շաբաթը վրայ հասնելով նորին Ամենապտուութիւնը մասնակցեցաւ բոլոր եկեղեցական արարողութեանց, որոնք այնքան շքեղօրէն կը կատարուին հայ ծիսիւ Լեւոնեան հայ վարժարանի հոյակապ եկեղեցւոյն մէջ։ Աւագ հինգշաբթի օրն անձամբ կատարեց Ոտնլուայի արարողութիւնը և Ճրագալուցի երկոյեան Զայնաւոր Պատարագն ալ ուզեց ինքն մատուցանել հանդիսապէս, այդ առթիւ յանուն Ս. Քահանայապետին լիակատար ներողութեամբ Առաքելական Օրհնութիւնն տուաւ բոլոր ներկայից։ Խուռն բազմութիւնը հիացմամբ ներկայ գտնուեցաւ ամբողջ արարողութեան ցվերջ նախատօնակի, որմէ ետքը Մաս բաժնուեցաւ ըստ սովորութեան։

Ուրախ օրուանս յաջորդեց ազաւոր Զատիկ մը. Արիի. Ցարութիւն Արք. Բուպեան՝ մեր Նուիրապետութեան ամենապատկառելի դէմքերէն մին, ճիշդ իր տօնին օրը երեկոյեան դէմ վախճանեցաւ։ Արդէն ութ ամսէ ի վեր օրհասական կաթուածքն յառաջացած էր այն աստիճանի, որ կարեկցելի անկարողութեան ենթարկած էր զինքն. ամբողջ Աւագ եօթնեակն հոգեվարքի օրեր էին. վերջին օծումն տրուած ժամուն հասկցաւ եղածն և աղօթեց անմռունչ՝ աչքերն սեւեռած Ս. ընտանեաց Պատկերին վրայ։ Ս. Քահանայապետն՝ տեղեակ իր կացութեան, Ամեն Հոգեւոր Տիրոջ ձեռօք առանձին Առաքելական Օրհնութիւն շնորհեց։ Կիրակի երեկոյին իր շուրջն հոկող քահանայից, Լեւոնեան վարժարանի աշակերտաց, Կաթողիկոսի. Գոյունեան Արքեպիսկոպոսի և ուրիշ բարեկամաց ներկայութեան, որոնք ծնրադիր կ'աղօթէին, արդիւնաշատ հոգին աւանդեց ու մնաց անշշունչ հանգարտ քնացող. Երկրորդ օրն՝ մնաց սենեակը՝ ի տես բարեկամ այցելուներու, երրորդ օրն՝ հանդիսապէս փոխադրուեցաւ եկեղեցի ուր Զայնաւոր Պատարագ մատուցուեցաւ, որուն ներկայ էր Ամեն. Հոգեւոր Տէրն, Գոյունեան Արքեպիսկոպոս ու Մխիթարեան Հայրեր Լեւոնեան վարժարանի քահանայից հետ՝ դասուն մէջ, անկէց դուրս մեծ բազմութիւն մը հանդիսատես էր. սոսնց մէջ կը գտնուէին բարձրաստիճան եկեղեցականք։ Թաղումը կատարուեցաւ երեկոյին՝ Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին մատուռը, որ գերեզմանոցին մէջ է։

Ապրիլ 23ին անգամ մ'ալ Ս. Քահանայապետն ընդունեցաւ զԿաթողիկոսն յառանձին ունկնդրութիւն եւ Ապրիլ 26 ին տեղի ունեցաւ հանդիսաւոր Ունկնդրութիւնը, Քահանայապետական ապարանքի Գահու Դահլիճին մէջ։ Հայ եպիսկոպոսունք, կղեր ու ժողովուրդ որ կը գտնուէր Հռովմ, ներկայ էին ինչպէս նաև Արևելեան Պատրիարքաց գործակալներն և ուրիշ աւագամեծար անձինք։ Երկու թիկնապահ զինուորներ յառաջացան և Ս.

Քահանայապետն ևկաւ օրհնելով և բազմեցաւ ի գահն։ Հոգեւոր Տէրը հագուած փիլոն և գամելաֆթի, համբուրեց Ն. Ս. ձեռքն ծնրադիր և ոտք ելլելով կարդաց զգացուած շեշտով փառաւոր ճառ մը իտալերէն լեզուաւ որուն հոս թարգմանութիւնը կը գնենք.

ԱՄԵՆԵՐԱՆԵԱԼ ՀԱՑՐ

Այն առաջին օրէն, յորում Տէրն կամեցաւ զիս պատրիարքական պատուոյն կոչել, մինչ դեռ կը գտնուէի հեթանոսաց Մեծ Առաքելոյն ծննդավայրն. իմ առաջին իղձս, առաջին մտածմունքս եղաւ նոյն Առաքելոյն փափագն, այսինքն գալու և ի Չեզ տեսնելու զՊետրոս, ո՛վ Սրբազան Հայր, որ այսպէս արժանաւորութեամբ կը բազմիք Եկեղեցւոյ ծայրագոյն քահանայապետութեան փառաւոր գահուն վրայ։ Եւ շատ իրաւամբ ա՛յն օրուան փութով ծագելուն անհամբեր կը սպասէի. յորում պիտի կարենայի՝ խոնարհած Ձեր ոտից առջև, լսել Ձեզմէ յաւիտենական կենաց և հայրական քաջալերութեան խօսքերն, որովհետև հաստատապէս կը հաւատամ թէ ո՛և է աւագութեան և իշխանութեան ապահովագոյն նեցուկ մը կարելի չէ այլուր գտնել եթէ ոչ այն գերագոյն իշխանութեան մէջ որով զարդարած է Քրիստոս Տէրն մեր զՊետրոս և անոր ցաջորդները։ Որովհետև Հռովմայ քահանայապետն, փոխանորդն Յիսուսի Քրիստոսի, որուն յանձնուեցաւ ամէն իշխանութիւն երկրի և երկնքի մէջ, միակ հշմարիտ սկիզբն և աստուածային ակնաղբիւրն է ամէն հոխութեան և իշխանութեան. ոյր վասն աստուածային Հիմնադիրն պայն հիմ դրաւ եկեղեցւոյ այն գերբնական և աստուածային ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ, որ ամենահաստատ և ամենէն ապահով հիմն է զոր կրնան ունենալ պետութիւնք, մարդկային ընկերութիւնք և ժողովուրդք։ Մեծ ցնորքն է այժմեան տիւր ժամանակներուն՝ ընկերային բարենորոգումներ, կառավարութեանց յեղափոխութիւններ փնտռել առանց Եկեղեցւոյ աջակցութեան, անկէ դուրս և՝ որ չարագոյն է՝ անոր ընդդիմադիր։ Այս կը նոյնանայ ընդ այն մահաբեր ամպարշտութեան որով կ'ուզուի գործել կամ ընդհանալ առանց Աստուծոյ և հակառակ Աստուծոյ, նոյն իսկ Ամենաբարին և Բարձրեալն Աստուծոյ անուշութեան հաստատած կարգին մէջ։ Սրբապիղծ ջանքն է արդի անօրէնութեան՝ ուզենալ բնականը գերբնականէն քեցել, մարդկայինը աստուածայինէն և եթէ հնար ըլլար՝ ջնջել նոյն իսկ Աստուծոյ գաղափարը և անոր Նախախնամութեան որ և է բացատրութիւնը։

Բայց ի զուր և իրենց ի կործանումն կը խռովին ազգերը, ժողովուրդք անոտի խորհուրդներ կը կազմեն. ի զուր երկրիս իշխանները ի միասին ժողովեցան հակառակ Աստուծոյ և հակառակ Անոր Օծելոյն։ Որովհետև մինչ ի բարձունս երկինք կը պատմեն Ամենակարողին Աստուծոյ փառքն և անոր արարածները կը պատմէ հաստատութիւնը, հոս՝ երկրի վրայ, Եկեղեցին ի մէջ հակառակութեանց և թշնամութեանց ժողովուրդներու դիմացը իբր դրօշ պարզեալ՝ իր հիասքանչ ընդարձակութեան, չքնաղ սրբութեան և անսպառ արգասաւորութեան պատճառաւ Աստուծոյ մարդկանց վրայ ունեցած նախախնամական տէրութեան անժխտելի փաստ կը հանդիսանայ։

Բայց և այնպէս, Ամեներ անեալ Հայր, թէպէտ և մոլորութիւնն և ամպարշտութիւն կարող չէ ազդել եկեղեցւոյ վրայ, բայց կը թունաւորէ և կը սպաննէ անոր զաւակները. որով նոյն իսկ ուղղափառ հասարակութեան ծոցին մէջ յահախակի կը տեսնենք ապականիչ աշխարհիս ողբալի ազդեցութիւնը։ Եւ այս քանդիչ ազդեցութեան պէտք է վերագրել իշխանութեան արհամարհանքն, հովիւներու անհնազանդութիւնը, Եկեղեցւոյ օրինաց դիմադրութիւնը, զորս պարտինք ողբալ նաև յարևելս։ Սակայն բնաւ չենք վեհերիր, Ամեներ անեալ Հայր, ցորչափ ճշմարիտ եկեղեցւոյ ծոցին մէջ ենք, քահանայապետական իշխանութեան վահանին ներքև, որ է անշարժ հիմն բովանդակ եկեղեցւոյ։ Ձեզ ուրեմն պէտք է փարինք մենք Պատրիարքունք և Եպիսկոպոսներ. քանզի մեր իշխանութիւնը Ձեզմէ կը բղխի, և ի Ձեզ միայն կրնայ նեցուկ գտնել։ Պաշտպանեցէ՛ք ուրեմն, Սրբազան Հայր, հաստատեցէ՛ք մասնաւոր կերպով Ձեր եղբայրները, մեր Հայ Նուիրապետութեան Պատրիարքն և Եպիսկոպոսները, որպէսզի այն հաւատքն որ զՁեզ կը սրտաւնդէ, այն իշխանութիւնն որ զՁեզ աներկիւղ կը կացուցանէ, վերու ի մեզ և այն կորովը, որով իբր բարի և քաջ հովիւներ կարենանք կառավարել հօտին այն մասը զոր Քրիստոս երկնաւոր հովիւ հոգւոց Ձեր միջոցաւ՝ որ իրեն փոխանորդն էք, մեզի յանձնեց։ Եւ այժմ այս հանդիսաւոր առթէն օգուտ քաղելով մասնաւոր կերպով իմ վրաս կը հրաւիրեմ, Ամեներ անեալ Հա՛յր. Ձեր Սրբութեան հայրական ուշադրութիւնը, աղերսագին հայցելով պատուական Ս. Պալիուզը, Առաքելոց Դլխաւորին Գերեզմանէն առեալ, որ է նշան Պատրիարքական պաշտաման լրութեանը։

Ուստի, Սրբազան Հա՛յր, Ձեր խրախուսանաց առհաւատչեայ թո՛ղ ըլլայ Առաքելական Օրհնութիւնը զոր այժմ կը հայցեմ իմ անձիս և օգնական Եպիսկոպոսաց, հայ ուղղափառ կղերին և ժողովրդեան և ամբողջ արևելքի վրայ։

Ս. Քահանայապետն պատասխանեց կարդալով հետևեալ ճառն որ չքեղ Ջատագովական մ'է մեր սիրելի Կաթողիկոսին եղական բարեմասնութեանց, որոնք տարի մը առաջ դղրդեցին Վասփոր ու բոլոր Արևելք։ Թէրզեան Կ. — Պատրիարք չէր կրնար անշուշտ ժողովրդական գովասանաց վստահիլ, որքան այսօր կրնայ ապահով ըլլալ արդարակորով Պիսի Ժ. ի հեղինակաւոր Ջատագովութեան, որմէ վերնագոյն և ապահովագոյն չկայ երկրիս վրայ։ Կը դնենք հոս այդ գեղեցիկ ճառն ի մխիթարութիւն մեր հասարակութեան և ի պատիւ մեր արժանաւոր Կաթողիկոսին.

Շնորհակալ եմ, Պատուական Եղբա՛յր, այն զգացմանց համար՝ զորս Ձեր և Հայաստանեայց Մեր ուղղափառ սիրեցեալ որդւոց անուանք Մեզի յայտնեցիք Ձեր սիրազեղ ճառին մէջ, զգացումի՝ որ անդիմադրելի եղանակաւ կը հաւաս-

տեսնի Մեզի ինչ որ Մեզի արդեն լիովին հաստատուած գիտենիք։ Արդարեւ հազիւ թէ Մեզի հաղորդուեցաւ Ձեր՝ Կիլիկիոյ Պատրիարք ընտրութիւն, ցնծացիք ի սիրտ եւ ի հոգի. որովհետեւ ասկէ յառաջագոյն կերպով չէր կրնար դարձեալ տարուած ըլլալ Հայաստանի կաթողիկէից բարոյն եւ օգտին։ Բարեպաշտութեան, կարգապահութեան ու գիտութեան այն խաղցր յիշատակը՝ զոր թողուցած էիք Տարածեան հաւատոյ դպրոցին մէջ, ուր դասախարակուեցաք, Քրիստոսի անոյշ հոտը զոր սփռեցիք, եւ այն կորովը որով խանգարեալ պաշտօնատարութեան ժամանակ պաշտպանեցիք ուղղափառ վարդապետութիւնը, ինչպէս նաեւ առաքելական այն եռանդն զոր ցոյց տուիք տասնեւութ տարուան եպիսկոպոսական վարութեան մէջ, այնչափ բարեգործութիւններով որ եւ պատեցան Աստուծոյ վերջին ջարդերուն մէջ, երբ անպատմելի զոհողութիւններով հոգացիք ոչ միայն հոգւոց բարիքն, այլ նաեւ խեղճ մնացորդներուն նիւթական պիտոյքները, բովանդակ այս գործերդ Մեզ կը գուշակեն այն մեծ բարիքը զոր պիտի ընէք Ձեր եղբարց իբրեւ Պատրիարք։

Զարմանալու չէ ուրեմն որ Ձեր ընտրութիւնն զՄեզ ուրախութեամբ լեցուցած ըլլայ, որովհետեւ ապահով ենք որ ինչպէս Հայաստանեայց կաթողիկեներուն մեծ խնդութիւն պատճառեց Ձեր ընտրութիւնը, այսպէս նաեւ, իբր հնազանդ որդիք՝ քաջալերուած Ձեր օրինակէն եւ Ձեր խօսքէն հաւատքնին կենդանի պիտի պահեն, եւ իրենց անբիծ ընթացքով Ձեզի ամենամաղցր մխիթարութիւններ պիտի պատճառեն։

Դժբախտաբար ժամանակները չար են. այր թշնամի կ'ուզէատի աւետարանական դաշտին մէջ որոմն ցանելու, բայց աստուածային Նախախնամութիւնը պիտի օգնէ մեզ. եւ Պատրիարքին հետ ուրտով եւ մտքով միացած Եպիսկոպոսներու եռանդով ոչ միայն իրենց հնազանդ եւ յարեալ պիտի պահպանէ ուղղափառ Եկեղեցոյն որդիները, այլ նաեւ անոնց վրայ պիտի հրաւիրէ նաեւ հերձելոց սխալեցուցը, որոնք Աստուծոյ շնորհքն ազդուած, հովիւներու խօսքն եւ օրինակն խրախուսուած, պիտի մեծարեն ու հպատակին ճշմարտութեան, միանալով իրենց եղբարց հետ զուրս ելած էին իրենց իսկ վնասով։ Առ այս մասնաւորապէս ուղղուած են Մեր իղձերն ու Մեր աղօթքները, որոնք, յուսամք, շուտով կ'ըլլան Աստուծոյ։ Մեծաւ հաճութեամբ կ'ընդունիք նաեւ Ձեր՝ Ս. Պալիտի մասին ըրած խնդիրքն, զոր քանի մը օրէ Ձեզ պիտի շնորհեմք իբրեւ մասնաւոր նշանակ եւ զարդ Ձեր Պատրիարքական պատոյն։

Ուստի նորէն հանդիսապէս հաստատելով Ձեր ընտրութիւնը, մասնաւոր բարեացակամութեամբ կը շնորհեմք Առաքելական Օրհնութիւնը Ձեզ, պատուական Եղբա՛յր, միւս մեծարոյ Եղբարց Եպիսկոպոսաց, սիրեցեալ Որդոց Հայաստանեայ՝ կղերին եւ ժողովրդեան։

Ունկնդրութենէն վերջը Ամենապ. Տէրն այցելեց Վսեմ. Ծիրանաւոր Մէրի տէլ Վալին, որ պահ մը սիրալիր խօսակցեցաւ իւր հետը։

Հետևեալ թուով պիտի տանք Ս. Պալիումի շնորհուելուն արարողութիւնը։

(Շարունակելի)

ԹԵՄԵՐՈՒ ՁԱՑՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

1. Առաջնորդ մը կը գրէ առ Հոգեւոր Տէր.

« Ձեր Գերերջանկութեան Հռոմէն ղրկած Շրջաբերականն եկեղեցւոյ մէջ՝ հոծ բազմութեան մը առջև կարդալով, առանձին բացատրական ճառով մը մեկնեցի գլխաւոր կէտերը, մասնաւորապէս զիրենք յորդորելով հաւատարիմ դտնուելու և իրենց որդիական հպատակութեան մէջ չթերանալու՝ հանդէպ Հռոմայ Ս. Գահուն և եկեղեցական Իշխանութեան։.... Շրջաբերականը խորունկ տպաւորութիւն մը թողուց անխտիր բոլոր ժողովրդեան վրայ և մեծ ուրախութիւն մը յառաջ բերաւ իրենց մէջ. որով արարողութեանց աւարտումէն յետոյ ժողովրդեան մեծամեծներէն կազմուած պատգամաւորութիւն մը Առաջնորդարանի մէջ լենձ ներկայանալով ազաչեց որ Ձեր Ամենապ. Գերերջանկութեան հաղորդեմ նախ՝ հասարակութեանն սրտագին բարեմաղթութիւնները Ձեր Գերերջանկութեան թանկագին կենաց, և ձեռնարկներուն ու նպատակներուն լիովին և յաջողութեամբ իրագործումին համար. երկրորդ՝ տեղւոյս ամբողջ կաթողիկէութեան Ձեր Գերերջանկութեան հանդէպ ունեցած խորին յարգանքն ու մեծարանքները։ Այս առթիւ թախանձագին կը խնդրեն որ բարեհաճիք այս կաթողիկէ « Հօտին փաքաւ » բացարձակ հնազանդութիւնը և որդիական հաւատարմութիւնն ու անփոփոխ հպատակութիւնը դնել յոտս Գահոյից Սրբոյն Քահանայապետին, Որուն նուիրական աստուածաւանդ Աւաքելական Օրհնութիւնը ունելի ևս պիտի ամրապնդէ զիրենք Հռովմէական Ս. Եկեղեցւոյ հետ »։

2. Մարգուան, 12 — 25 Յունիս 1911

Մարգուանու Հայ կաթողիկէ Հասարակութիւնը որդիօրէն հնազանդ Ամենապատիւ Գերերջ. Հոգևոր Տեառն, հրապարակաւ կը յայտնէ իւր հրաւ և անպայման հպատակութիւնը և փարումը՝ ի Ս. Գահէն վերապատուեալ և հաստատեալ սոյն մեր Օրինաւոր Հովուին՝ Ամենապատիւ Գերերջանիկ Տեառն Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեանի՝ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս - Պատրիարքին կաթողիկոսական բարձր և իմաստուն հրամանաց կարգադրութիւններուն և սահմանաց։ Եւ իբր կաթողիկէ, կը ցաւի հասարակութեան կամ ընկերակցութիւններու կաթողիկէ սկզբանց հակառակ ընթացքին վրայ։

(Կը հետևին վաթսուն եւ իմն ստորագրութիւնք.)

Կը հաստատեմք կամովին և հաճութեամբ ստորագրած ըլլալնուն. կը ձայնակցինք ժողովրդեանս կաթողիկէ յայտարարութեան և կը բողոքեմք խստիւ կաթողիկէ անուն կրելով հանդերձ Ամենապատիւ Գերերջ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թէրզեանի բարձր և իմաստուն որոշումներուն և հրամանաց անսաստողներուն դէմ։

Յովսէփ Վ. Պայրուրի, ժողովրդապետ.
Գարեգին Վ. Տօնիկեան.



Փ. Պիանիի
Տնօրէն Պատասխանատու

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հանաժողով Ամենասուրբ Հաղորդութեան ի Մատրիս . . . . . էջ 47
Ապօրինի եւ անարժան յայտարարութիւն մը . . . . . » 51
Տեղեկագրական. — Ամենապ. Թէրզեանի Գալուստն ի Հռոմ . . . . » 52
Թեմերու Զայնակցութիւն Կաթողիկոսական Տրամադրութեանց . . . » 57